«ՍԳԿԿ» ԻԿԿ Կ ա ր գ ա պ ա հ ա կ ա ն հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն ի ս տ ի

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Իվ

(Կազմված է «13» հունիս 2024թ. և բաղկացած է 5 (հինգ) էջից)

ք. Երևան, Արշակունյաց 5.108 սենյակ 13.06.2024թ., ժամը 16:00

Համաձայն 30.05.2024թ.-ի «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Խաչիկ Արշամի Գրիգորյանի կողմից ստացված դիմումը Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու նպատակով ս/թ.-ի հունիսի 13-ին հրավիրված էր Կարգապահական հանձնաժողովի նիստ:

ԾԱՆՈԻՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ՝ Մակար Եղիազարյանը

Դիմումատու՝ Խաչիկ Արշամի Գրիգորյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝Արմինե Մովսիսյանը

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ՝ Մակար Եղիազարյանը

Դիմումատու-պարտապան՝ Խաչիկ Արշամի Գրիգորյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Խաչիկ Արշամի Գրիգորյանի կողմից ստացված դիմումը Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի վարքագծի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության քննարկման հարցը.

ԼՍԵՑԻՆ

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց բողոքաբերի բողոքը և առաջարկեց սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ Արմենակ Ադամյանը և նշեց, որ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի գործողություններում կարող են տեղ գտած լինել կարգապահական խախտումներ, որոնց քննման և վեր հանման համար անհրաժեշտ է հարուցել Կարգապահական վարույթ և քննել բողոքում առծածված հանգամանքները:

Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ

Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի նկատմամբ՝ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Խաչիկ Արշամի Գրիգորյանի կողմից ստացված դիմումը Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի գործողություններում «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքերի վերհանման համար, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ – Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց աշխատանքային հետևյալ կարգը՝

1.Լսել Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին.

2.Ուսումնասիրել բողոքաբեր Խաչիկ Արշամի Գրիգորյանի տրամադրած փաստաթղթերը.

3.Ուսումնասիրել կառավարիչ Մակար Եղիազարյան կողմից ներկայացվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի անդամները, սնանկության գործով կառավարիչը համաձայնեցին աշխատանքային կարգին :

Ձայն վերցրեց Խաչիկ Արշամի Գրիգորյանը , ով փաստեց, որ 28.07.2022 թ.-ին ՀՀ սնանկության դատարանի վճռով ճանաչվել է սնանկ և իր սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Մակար Եղիազարյանը :

Պարտապան Խաչիկ Արշամի Գրիգորյանի կողմից 20.09.2023 թ ներկայացվել է ֆինանսական առողջացման ծրագիր : Հաստատված ծրագրի շրջանակներում Խաչիկ Արշամի Գրիգորյանն հանդիսանում է ընկերության գործադիր տնօրենը ,սակայն ներկայացված առողջացման ծրագրով գործունեության ընթացքում կառավարիչը խոչընդոտում է մուտքը այն տարածք ,որտեղ

իրականացվում է գործունեությունը :Միաժամանակ տեղեկացրեց ,որ այլ ճանապարհով կառավարչի կողմից ներգրավված ներդրումները որևէ կերպ մինչ օրս չեն հիմնավորվել և առողջացման ծրագրով ամենամյա բաշխման ընթացքում բաշխումն իրականացվում է սկզբում միայն այն ուղղությամբ ինչն կառավարիչն է ներգրավվել միջոցներ ,այնինչ առողջացման ծրագրի բաշխմամբ այլ է : Բացի այն ,որ սնանկության գործով կառավարիչն առանց որևէ որոշման ինքն է սկսել առողջացման ծրագրի կատարումն ,առանց դատարանի որոշման և պարտատերերի համաձայանության ,ինքնակամ է վարում տնտեությունը իր օգնականի հետ միասին ներս չի թողում պարտապան Խաչիկ Արշամի Գրիգորյանին: Ավելացրեց նաև ,որ սնանկության ործով կառավարիչ Մակար Եղիազարյանը առգրավել է ընկերության տնօրենի կնոջ Նաիրա Սարգսյանի անվամբ առկա <Նիվա շեվռոլետ> մակնիշի ավտոմեքենան և կայանել է իր մոտ գտնվող տարածքում ,պարզաբանելով ,որ գույքը աճուրդով պետք է վաճառվի ,մինդեռ առկա է ֆինանսական առողջացման ծրագիր և լուծարման վարույթ դեռ չի սկսել :

Ավելացրեց ,որ կառավարչի կողմից ներկայացվել են ծախսեր ,որոնք ներառված չեն առողջացման ծրագրով մասնավորապես 2,400,000 ՀՀ դրամ ԱԱՀ -ի վերադարձի գումար 1,674,000 ՀՀ դրամ ,որը համարվում է դեբիտորական պարտք / վերադարձելիության գումար / այլ ոչ թե պարտավորություն կազմակերպության :

Ձայն վերցրեց սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանը և հայտնեց ,որ նախ սնանկության վարույթը վերաբերվում է ֆիզիզկական անձի ,այնինչ Պարտապանը նշել է ,որ ինքը հանդիսանում է ընկերության տնօրենը :Հավանաբար վերջինս ի նկատի ունեցել <Գեչի 15 > և <Սրբահան > ընկերությունները ,որոնցում ինքը հանդիսանում է տնօրեն ,սակայն հաշվի չի առել ,որ գոմերը վարձակալված են այլ ընկերության <Քրայզիս Մենեջմենթ> ՍՊԸ -ի կողմից ,հետևաբար միայն վերջինս իրավունք ունի օգտագործելու և տիրապատելու տվյալ տարածքը: Բողոքի երկրորդ կետում նշվածն անհիմն է ,քանի որ Կառավարչի կողմից չեն ներգրավվել ներդրումներ ,այլ Վարձակալի և որևէ նշանակություն չունեն սնանկության վարույթի շջանակներում : Պարտապանը ֆինանսական առողջացման ծրագրով պարտավոր էր ֆինանսական մուտքեր ապահովել մասնավորապես՝ իր տունը որպես հյուրատուն դարձներ և իր անվամբ առկա գյուղատնտեսական հողերը հանձներ վարձակալության :Իսկ մյուս փաստերի հետ կապված դրանք խեղաթյուրված են և անհեթեթ : Կառավարչի կողմից պատշաճ կերպով իրականցվել է իր իսկ լիրազորությունները : Հաշվի առնելով ,որ առողջացման ծրագիրը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով այն չկտարելու դեպքում հետևաբար ենթակա է իրացման սնանկության զանգվածում ներառված գույքերը ,իսկ տարածք մուտք գործելը չեն թույլատրում ,քանի որ տարածքները վարձակալված են երրորդ անձի կողմից ,բացի դա պարտապանը թույլ է տվել առանձնապես խոշոր չափերի յուրացումներ :Հայտնեց նաև ,որ ներդրում է կատարվել այլ կառույցի կողմից որպես տնտեսական գործունեություն իրականացնելու համար ,սակայն պարտապանը դիտարկում է սեփականություն ,որի համար ներդրողին հասցրել է մոտ 20,000,000 վնաս ,որը քննության առարկա կդառնա քրեաիրավական վարույթի ընթացքում :

Հանձնաժողովի անդամ Արմենակ Ադամյանը պարտապան Խաչիկ Արշամի Գրիգորյանին հղեց հետևյալ հարցը՝ դիմումով խնդրել եք սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել և նշանակել սնանկության գործով նոր կառավարիչ ,քանի որ Ձեր կողմից կատարվել են վճարումներ ,իսկ այդ վճարները չի ուղվել ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված պարտավորությունների մարմանը :

Պարտապանը հայտնեց ,որ իր կողմից վճարել է որոշակի գումարներ և դատարանի կողմից եղել է հաստատված բախման միջանկյալ ծրագիր և որում առկա չէ իրավաբանական ծառայությունների մատուցման համար նախատեսված գումարներ :

Տվյալ հարցին պատասխանեց նաև սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանը ,ով հայտնեց ,որ որպես ֆիզիկական անձի սնանկության գործով կառավարիչ ֆինանսական առողջացման ծրագրով մուտք եղած գումարներից նման բաշխում չի եղել :

Ռուբեն Խալաթյանի կողմից հնչեց այն հարցը թե որն է կառավարչի լիազորությունների չկատարումը ,մինչդեռ կառավարիչը տեղեկացրեց ,որ իր կողմից իրականացվել է գյուղատնտեսական ծրագրերի շրջանակներում ներդրումներ իրականացնող կազմակերպությունների հետ քննարկումներ ,որի արդյունքում մոտ 9000.000 ՀՀ դրամ ներդրում է կատարվել տվյալ բիզնեսում ,իսկ պարտապանը հայտնում է ,որ կառավարչի կողմից որևէ գործողություն չի կատարվել :

Պարտապանը հայտնեց ,որ այդ բիզնեսը խոզաբուծություն է , ռիսկային է ,սատկում են կենդանիները /խոզերը/ հետևաբար կարող է նաև վնասվել :

Հարց եղավ նաև հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանի կողմից ,ով շարադրեց հետևյալը , եստ պարտապանի կառավարիչ Մակար Եղիազարյանը չի թույլատրում պարտապանին մուտք գործելու իր իսկ սեփական տարածք և հետեվելու տնտեսական գործունեությանը ,ինչ հինքով և ինչի համար:

Սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանը հայտնեց ,որ պարտապանը փետրվար ամսից հետո կառավարչին տվել է սխալ տեղեկություններ ,մասնավորապես խոզերի քանակի վերաբերյալ ,բավականին խոզեր մորթվել են պատճառաբանելով ,որ հիվանդ են հատկապես մայրացուներ ,որի հետևանքով վնասել է հետագա աշխատանքները : Եվ մորթված կենդանիների վաճառքից առաջացած գումարները մուտք չի եղել ֆինանսական առողջացման ծրագիր շրջանակներում ,հետևաբար դիտարկվում է յուրացում ,որը հետագայում կքննվի այլ մարմիններում :

Ապացուցողական բոլոր փաստաթղթերը հանձնվեցին հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին և հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի անդամները համաձայնեցին այն մտքին, որ ներկայացված փաստական հանգամանքները բավական են, որ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ կայացվի ժողովի որոշում:

Հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանը առաջարկը դրեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՀՀ «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի անվամբ Խաչիկ Արշամի Գրիգորյանի կողմից ստացված դիմումը Խաչիկ Արշամի Գրիգորյանի սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի գործողություններում չկան խախտումներ, վերջինս գործել է ՀՀ Օրենսդրության շրջանակներում և գործողությունները իրականացրել է բացառապես <Սնանկության մասին > ՀՀ օրենքի պահանջով և առկա չէ «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքեր, ուստի գործողությունների բացակայության պատճառաբանությամբ հարուցված Կարգապահական վարույթը կարճել:

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ»ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուբեն Խալաթյան

Արմենակ Ադամյան